

ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԵՒ ՆՐԱ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Sպագրական դիւտր, կատարուած դերմանացի Դուտեմբրեկի մեռքով, սկսեալ 15-րդ դարի կէսներից, մի նոր յեղաշըջում ստեղծեց զիր ու գրականութեան ծարաւ ազգերի կեանքից ներս, որոնց թուում եւ Հայ ժողովրդի կեանքի մէջ:

Թէեւ համեմատած երրոպական մի քանի ազգերի հետ, տպագրական աշխատանքները մեղանում աւելի ուշ զարգացան, Հազի 60 տարի յետոյ, բայց այսուհետեւ մենք առաջին այն ազգերից էինք եւ Սփոյ եւրոպականացած այն ժողովուրդը՝ որ կարողացանք թրբոնել տպագրական դիւտի կարեւորութիւնը եւ սկզբանական շրջաններում միմիայն անհատական ճիգերով փարեցինք զրեքր տպագրելու մեծ ու զժուարին աշխատանքներին:

Հայերէն լեզուով տպագրուած առաջին դիրքը՝ «Պարզատումար» անունով, լոյս է տեսել 1512 թուին, մի երախտաւոր Հայի՝ Յակորի կողմէից Վենետիկում, որը իրապէս մի մեծ քայլ է որպէս առաջին տպագրութիւն։ Երկրորդ արժէքաւոր քայլը՝ արդ ուղղութեամբ կատարել է Արգար Դպիր Թոքատեցին, սկսեալ 1565 թուից, Վենետիկում ու Կոստանդնուպոլսում։ ՃԶ. դարի վերջին տպագրիչներն եղել են Յովհաննէս Տերզացին ու Սուլթանշահը՝ Հոռոմում, ապա միայն առաջինը՝ Վենետիկում։ Այսուհետեւ աշխատանքներ տարուել են նաև Լվովում, Միլանում, Փարիզում, Նոր-Ջուլյում, Լիոնուոյում, Ամստերդամում եւ այլ վայրերում։

Այն օրերի տպագրութիւնները այժմեան ակնոցով թէեւ երբեմն թուում են ինեղուեկրակ, զորկ արուեստից ու ճաշակից, բայց համեմատած անցեալ դարերի զարգացման եւ միջանցներու ու պայմանների հետ, երբ դեռ տպագրութիւնը հաջու կէս դարու անցեալ ունէր, պէտք է ասել որ կատարուած աշխատանքները եղել են գերազոյն ճիգերի

արդիւնք եւ արժանի՝ զնահատութեան։ Տասնից-տասնեօթերորդ գարերի Հայկան տպագրութիւնների մէջ կայ սուկայն մի աւելի քան մեծ ու կոթողական գործ, որ պատիւ է բերում ոչ միայն իրեն՝ տպագրիչն, այլեւ իր ծնող Հայ ժողովրդին։ Դա առաջին Հայերէն Աստուածաշումնէ է, որ տպագրուել է Ամստերդամում 1666 թուին, մի Հայ սնիսնջ Հոգեւորականի՝ Ուկան Վարդապետի ձեռքով։

Բայց նախ տեսնենք թէ ո՞վ էր Ուկանը։

Հայ Հոգեւորական դասի մէջ, որպէս Հարազատ զաւակները մեր մեծ Հուսաւուրիչներ Ս. Սահակի ու Մեսրոպ Մաշտոցի, ունենք բազմաթիւ անձնք, որոնք իրենց կատարած աշխատանքներով պատու են բերում Հայ ժողովրդին։ Ահա անձնուէր այդ դասին է պատկանում եւ Ուկան Վարդապետը։

Մնուել է Նոր-Ջուլյայում 1614 թուին. ուրեմն բնիկ Զուլզայցի է, թէեւ մինչեւ վերջ էլ ինքնիրեն անուանում էր Երեւանցի, ծնողների՝ այնտեղից գաղթած լինելուն պատճառով։

Ուկանի հայրն ու մայրը՝ Թորոսն ու Գուշաղիդր Երեւանցի էին, որոնք Շահ-Ալրասեան մեծ գաղթի օրերին, գեռ եւ պատանի Հասակում, Երեւանից գաղթել էին Ապահան (Նոր-Ջուլյա) եւ այսուեղ ընտանիք կազմելով ունեցել զաւակներ, որոնցից իրենց տպագրական աշխատանքներով յայտնի են Աւետիսը եւ Ուկանը(1), ազգանունով կոչուած Ղլիճնենք (Ղլիճեան)։

(1) Ուկան Վարդապետի ծննդեան եւ տպագրաթեամ գործի մասին բացի իր տպագրած Աստուածաշումնի յիշատակարամից եւ Առաքել Գրտ. Դարիմեցու ՀՀայոց Պատմութիւնը գրքից (1660 թ. Ամստերդամ, էջ 620-638), խօսում են նաև հետեւ Խալիլը.

Ա. Միհայէլ Զամշեամ «Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1784 թ. Գ. Խատոր, էջ 620-664։

Ասկանը իր սկզբնական կրթութիւնն ըստացել է Նոր-Ջուղայում, ապա աշակերտութեան հրանի Հայկական տպագրութեան հիմնադրի եւ Հայ Գուտանաբերք անուան արժանի Խաչատուր Վրդ. Կեսարացուն, որը 1620 թուին, որպէս կաթողիկոսական նուիրակ Մովսէս Վարդապետի (յետոյ կաթողիկոս) հետ Նոր-Ջուղա է գալիս եւ տեղի ժողովրդի խնդրանքով մնում այնտեղ որպէս առաջնորդ:

Ասկանը ի տես Ս. Ամենափրկչեան Վանքում Խաչատուր Կեսարացու կողմից բացած դպրոցի ու դպրանցի աշակերտների, ինքն եւս իր ուսման տենչը գոհացնելու համար, Հակառակ ծնողների կամքի, սկսում է յաճախել Վանքի կրօնական դպրոցը:

Խաչատուր Կեսարացին 1628 թուին կանչըսում է Էջմիածին, իսկ երբ Մովսէս Վարդապետ Տաթեւացին, 1629 թուի Յունի Օռանուար 13-ին օծում է Կաթողիկոս, Կեսարացուն գործուղղում է էջաքի Սրեւմտեան Եւրոպա-Յունաստան, որպէս կաթողիկոսական նուիրակ(2), իսկ ինըը, կարճ ժամանակ յետոյ, երբ մեռնում է Իրանի մեծ եւ զօր արքան՝ Շահ Արքասը, գալիս է Նոր-Ջուղա, նրա յաջորդ Շահ Սէֆու գահակալութիւնը:

Բ. Խաչատուր Արեդայ Զուղայնից «Պատմութիւն Պարսից», Վաղարշապան, 1905 թ. էջ 121:

Գ. Մաղաքիս Արք. Օրմանեան ընզապատում», Վ. Պոլիս, 1914 թ. Բ. հատոր, էջ 2537-2547 (1745-1749, մատ. 1713):

Դ. Գ. Խեմենա «Հայ Գիրք և Տպագրութեան Արևետը», Երեւան, 1968 թ. էջ 100-110:

Ե. Յ. Գալստեան «Ռուսական բնակչություն», Վեպ, Երեւան, 1962 թ.:

Զ. Փրոֆ. Ա. Ալավելիս «Հայ ժող. Մուսար Մշակոյր» Զարգացման Պատմութիւն», Բ. հատոր, Երեւան, 1964 թ. էջ 298-308:

(2) Խաչատուր Կեսարացու Արևմտեան նորապայի (Յունաստանի), նուիրակ լինելու առքի Նոր-Ջուղայի պատմագիր Յ. Տէր Յովհանեսը, իր ժուամանակին Նոր-Ջուղայի գրքում (1881 թ. Բանաօր, էջ 24-ի յաւելած 2), կասկած է յայտնում, միջդեռ այս վկայում է ինքը նույնաց, Ա. Դարիթեցու ՀՀայոց Պատմութիւնը գրքում (էջ 630), իմչեւու և Հայոց Միք. Զամշեանը («Պատմ. Հայոց», Գ. հատոր, էջ 633):

Հնորհաւորելու եւ Էջմիածնի վրայ տեղացուած շուրջ Հաղպատակ Թումանի Կարկը նուսաղեցնելու համար:

Մովսէս Կաթողիկոսը Սպահանում մնում է շուրջ ութիւն ամիս, աշնանը վերադառնում է Էջմիածին, իր հետ տանելով նաեւ Ռոկանին, որ արդէն վարդապետական կոչում էր ստացել:

Ուկան Վարդապետը էջմիածնում շարունակում է իր ուսումը Մելիքսէթ Վրդ. Վժանցիի (3) մօտ, ապա, երբ Խաչատուր Կեսարացին իր նուիրակութեան ըրչապատճենից վերադառնում է Էջմիածին, Զուղայից Խնձրակներ են գալիս նրան Սպահանս տանելու համար: Կեսարացու հետ Նոր-Ջուղա են գնում Ուկան եւ Միմէն Վարդապետները:

Ուկանը Զուղայում մնում է շուրջ երկու տարի: Երբ Մովսէս կաթողիկոսից յետոյ՝ 1633 թուին յաջորդում է Փիլիպոս Ա. Աղարքեցին, Ուկանը կրկին կանչուում է Էջմիածին: Այսուեղ նա Հանդիպում է Պօղոս Փիրումալի (4) անծոնով մի լատին կրօնաւորի եւ նրանից ուսումնում լատինական լեզուն, միաժամանակ ինքն եւս նրան ոսկորեցնելով հայերէն:

Ուկանը օտար լեզուն սովորելուց յետոյ ձեռնարկում է մի շարք թարգմանական աշխատանքների, որոնց մասին բացասական արտայայտութիւններ կան մեր պատմական եւ ուսումնասիրական մի քանի գրքերում (5):

Ուկանը Հետազայտմ Փիլիպոս Կաթողիկովի կողմից նշանակում է Ուշիի Ս. Մարգարակարի վանքի վանքի վանահայր եւ 1650-ական թուերին (6), այնտեղ ձեռնարկում է Հմանարական մի շարք աշխատանքների. նախ հարթեցնում է տաճարի ըրջա-

(3) Դաւիթինցի, էջ 631: Զամշեան, էջ 610:

(4) Դաւիթինցի, էջ 633: Զամշեան, էջ 620:


(5) Ուկանի գրական աշխատանքների մասին բանական նոր արտայայտում Զամշեանը եւ Օրմանեանը:

(6) Ուշիի վանքի շինարարական բաւականի մուսկանական պրետ յիշատակաւրին չի անում, իսկ Զամշեանը այս նշանական է 1654 թիւը (Գ. հատոր, էջ 648):

պատը եւ մաքրում անուաշ ու խոշոր քարերից, ապա պարապապառում է վանքը եւ ներսում կառուցում միաբանական սննդակներ, սկսում՝ է նաև եկեղեցին նորոգելու աշխատանքները, բայց նիւթական միջոցների չփոյտվեան պատճառաւ հնարաւորութիւն չի սննդաւմ սկսուած աշխատանքները լրացնել:

Վանքում բազուռէ է դպրոց:

Մարեցին մի քանի տարի Եւրոպայի քաղաքներում պարտելուց եւ աշխատանք տառներց յետոյ, երբ լատին կրօնաւորների հալածանքների հետեւանքով չի յաջողում ձեռնարկել ապագրական գործին, անցնում է Ամստերդամ եւ մեծ գծուարութիւններ յաղթահարելով, երեք տեսակ հայերէն տառութիւն դպրագրելով պատուէրներ է տալիս, Աստուածաշունչի տպագրութեան համար,



Ընթարքանութիւն Խմանուսիրական, Ամստերդամ, 1702. Գումարախտակ:

Հայ գրքի տպագրութեան վայրերից մէկը, սկսեալ 1660 թուից, Հանդիտացել է Հունագիրայի մայրաքաղաք Ամստերդամը: Մինչեւ Ռոկանի Եւրոպա գնալը, տպագրական աշխատանքն այնտեղ արդէն ընթացքի մէջ էր գրուած:

Յակով Դ. Զուլայեցին, երբ 1655 թուին կաթողիկոս է դառնուում, որպէս Խաչատուր Կեսարացու Հարազատ աշակերտներից մէկը, ցանկանում է իրականացնել իր մեծ ուսուցչի վաղեմի բաղմանքը, այսինքն՝ տըպագրութեան յանձնել: Աստուածաշունչը Հայերէն լեզուով, որը Նոր-Զուլայյում եւս սկսուել բայց մնացել էր թերի վիճակում: Ռուսի այդ նպատակով 1656 թուին, Կաթողիկոսարարանի դպիր եւ ծաղկող Մատթէոս Մարեցում ուղարկում է Եւրոպա:

Տառերի ժամանակին պատրաստ չլինելուն հետեւանքով 1660 թուին, ձեռնարկում է տպագրելու ներսէ Ծնորհալու «Յիսուս Որդի» գիրքը: Տակադին չաւարտած՝ ծանր կերպով հրանդանում է:

Այդ օրերին վաճառակմանական գործով Ամստերդամում էր գտնուում Ռոկանի եղբայր Աւետիս Ղլիճենցը: Մատթէոսը տեսներով որ ինքը կարող է մեռնել եւ տպագրական գործը խափանուել, նաև այն որ տպարանը պարտիք տակ լինելով կարող է գրաւել պարտատէրիք կողմէց՝ որոնք իր մաշճի շուրջն էին բռնել, օգնութեան ձեռք է մեկնում գէպի Աւետիսը եւ նրան իր ժամանչելով տպարանն իր ամբողջութեամբ փոխանցում է նրա անունին: Տպարանը, բայց իրենց մէջ կայացած համաձայնութեան, կոչւում է «Ս. էջմիածնի եւ Ս. Մարգիս Զօ-

բավարի» անումով, Այս դէպքից կարճ ժամանակ յետոյ մեռնում է Մատթէոսը 1661 թուի Յունուուր 22-ին:

Մարեցու մահից յետոյ, Աւետիսը վճարում է նրա պարագերի մի մասը, միւս մասի համար էլ մուլրհակ տալով տպարանն առնում է իր իրաւասութեան տակ եւ լրացրուու Մարեցու սկսած եւ թերի թողած «Յիսուս Որդի» գերբը:

Աւետիսը նկատելով որ ինքը բաւականաշափ գրադէտ չէ տպագրական գործը վարելու համար, մի նամակով դիմում է եղբօրը Ռոկանին՝ Ամստերդամ գնալու Ռոկանը եզրոր նամակն ստանալով դիմում է Յակոպր Կաթոլիկոսի, որ անմիջապէս կարդագրում է Կարապետ Վրդ. Աղրիանացուն շտապ Ամստերդամ մեկնել, իսկ յետոյ էլ 1662 թուին Ռոկանին է ուղարկում, եպիսկոպոսական աստիճան տալուց յետոյ:

Մինչեւ Կարապետ Վարդապետի տեղ հասնելը, Աւետիսը 1662 թուին մեռնարկում է տպագրելու մի «Ճամագիրք», որը լոյս է տեսնում 1663 թուին Կարապետի տեղ Հառնելուց յետոյ, 1664 թուին միտանական ուժերով տպագրութեան են յանձնում մի «Ապղմու»:

Նախքան Ռոկանի Ամստերդամ ժամանելը, Աւետիսը իր պարանքների հետ վերցրում է մինչ այդ տպագրուած գրքերից 1200 օրինակ «Յիսուս Որդի», 2700 օրինակ «Ապղմու» եւ 3000 օրինակ «Ճամագիրք» եւ մեկնում Հայաստան(7):

Երկու եղայրներ՝ Աւետիսն ու Ռոկանը լիլունո քաղաքում Հանդիպում են միամեանց այդուղի Աւետիսը Ռոկանին է փոխանցում ապահով իր բոլոր իրաւունքները, իսկ Ռոկանը մինչեւ Ամստերդամ Հառնելը մի նամակ է ուղղում Աղրիանացուն՝ որ տպարանի աշխատանքները չգագրեցնի մինչեւ իր հասնելը: Ապա տեղում դիմում է մի շանի Հայ վաճառականների, Աստուածա-

(7) Աւետիսի Հայաստան տարած գրքերի մասին յիշտակուրիմ ուսնեն. Գր. Լեռնեամբ՝ «Հայ. Դիր.», էջ 100 և Ա. Առանեամբ՝ «Հայ Ժայ.», էջ 296. Այս հատոքը ժամագրին հանակ տարիին գրում է 200 օրինակ, իսկ երկրորդը՝ 3000 օրինակ, մենք հետեւեցիմք վերջինին:

չունչի տպագրութեան համար օժանդակում թիւն ստանալու համար, բայց մերժում ըստանալով մեկնում է Հռոմ, տպագրական դործին ծանօթանայու եւ օգնութիմ ձեռք բերելու նպատակով:

Ռոկանը Հռոմում եւա յաջողութիւն շտանելով, կրկին գառնում է Լիվուոն, ուր գտնում է երեք ջուղայիցի վաճառականներ՝ Սուեֆաննու Խոնեց, Թէոդորոս Քիցչենց եւ Պետրոս Տէրի Աւետիսին գրութիւնից ստանալու համար, պայմանով որ գրքերի վաճառքից յետոյ իրենց դրամր Խոյնութեամբ իրենց եւ վճարուի, իսկ գոյացած շահը լուսացուի Ս. էլեմիածնի, Ս. Երուսաղէմի եւ Ռէշի Ս. Սարդու Զօրավարի վաճառքին(8):

Չուղայէցի վաճառականների բերած օդնութիւնը յուսադրում է Ռոկանին, եւ այդ դումարը միացնելով իր միւս ժահացեալ եղբօր՝ Ցովհաննէսից իր մօս ունեցած գումարի հետ, այդավելից մեկնում է Ամրատերդամ եւ նոր եռանդով ու սիրով անցնում տպագրական աշխատանքներն:

Ռոկանի անդ համելուց առաջ, Կարապետը ձեռնարկած է լինում տպագրելու մի «Ետրական», զոր աւարտում են միասին, իսկ Աստուածաշունչի Համար պատուիրում նոր տեսակի տառեր ու զարդարքեր է Միելու տառերի պատրաստուելը, 1666 թուին տպագրում են մի «Ալյրեննարան եւ Քիստոնէական» եւ մի «Քերականութիւն»(9):

Նախնական մի շարք աշխատանքներից յետոյ նոյն 1666 թուին Ռոկանը մեռնար-

(8) Մեր օգնուած ապրիլին մէջ, արան անանց յիշեցիմք սկզբան, կամ որպէս պատմական տարրերը իրենները: Միելու միտքի ենք առել անդ երեսներին եւ Քիստոնէականութիւնները:

(9) Ա. Առանեամբ իր էջայ ժառ. Զարգ. Գառա.՝ մէջ (Բ. հատոք, էջ 207) գրում է «Ալյրեննարան եւ Քիստոնէական»: Այս մասին գրում է նաև Դարիմեցու «Հայոց Պատմ.» մէջ: Միելու առաքի տակ ունենալով «Ալյրեննարան» եւ Քիստոնէական-ը, իմշպէս եւ էջայ հմասիպ զքի մատնեագիտական ցուցակը, գրում ենք երկուամ եւ:

կում է տպագրելու ժողովրդի փափաքելի գիրքը՝ Աստուածաշունչը, որն աւարտում է 1668 թուին, տքնաշան ու եռանդում աշխատանքներից յետոյ:

Ասկանի տպագրած առաջին հայերէն Աստուածաշունչը մի կոթողական գործ է, որ պատիւ է բերում ոչ միայն իր տպագրիչն, այլ նաև Հայ ժողովրդին: Ունի 26 × 21 10 ամ. - ծավալ, 1468 էջ, չափասած է երկունակ, գրեթե սկիզբներում և էջերի ճակատներին երկուական եւ որում տեղերում սիմաներին մէջ մէկական պատշաճ նկարներ կան, որոնցից Հետ Կոտակարանում կայ 51, իսկ նոր Կտակարանում՝ 107 հատ, միասին՝ 158 նկար: Լուսանցքներում աըրած են այլ գրեթե համարարրատներ:

Գիրքն էջակարուած է Ծիռքի մօտ Հայկական իսկ վերեւի Ժամերում արարական Արանիուններով, որքի էջակարութիւնը բաժնենում է երեք մասի: անուանաթերթից յետու որքի բջում ըրուած են «Համարադական արհեստ բնդ Հայոց Համեմատեաւշ Հոգիսկան եւ, արարական Ցուանշանների աղիւականները, իսկ բաղրոգ՝ Համարակալւած թերթում երկու էջի վրայ, Յակոր Պաթողիկոսին ուղղուած տպագրողի խօսքը որպէս նախարան, միասին՝ 4 էջ(10): «Գիրք Ծննդոց»-ը սկսում է էջ 1-ից եւ շարդանկում մինչեւ «Գիրք Երկրորդ Մակարասյեցոց»-ի վերը, էջ 928 (Հայկական ունի) ու ուր ընդհանուրում է թուերի չարունակունքնը եւ «Գիրք Յօրայ»-ից կրկն էջ 1-ա, շարունակում մինչեւ զրքի վերը՝ 834-պլզ:

Ցովանուու Յարտութիւնը վերջանում է 718-գիք էջով, որից յետոյ մինչեւ զրքի վերը կան հետեւեալ վերնագիրները.

Ազօթք Մանասէի Արքայի Յու-
դայի էջ 719

Գիրք Եղրասայ չորրորդ էջ 719-744
Չերսնիմոսի առաջարանութիւն

(10) Անուանաթերթի եւ Յակոր Կարօնիկանին ուղղած խօսքի թերթիկի մէջ կայ մի այլ թերթ, որ «էլիմ եւ նոր Կոտակարանների Վկայակրանց» համարարրան ունի. բայց էջերը կարուած լինելով, տեղը հնարաւոր չկար նշանի:

սաղաւարտիկ եւ Աւետարանների նախադրութիւններ էջ 745-759

Յանդ վկայութեանց ի Քրիստոսէ եւ յառաքելոց ներ Նորու Կոտակարանում համառուցելոց ի Հնոյն էջ 760-765

Երրայեցւոց Քաղէկացւոց եւ Յու-
նաց անուանց թարգմանութիւն, էջ 765-773

Յանդ ժամեռնական էջ 774-829

Ոտանաւոր բարեկաչտի թագտու-
մին Հայոց Հեթմոյ էջ 829-831

Առ ընթերցօղուդ էջ 831-833

Եթշատակարան էջ 833-834

Ոսկանի տպագրած Աստուածաշունչից
Ա. Ամենափրկչեան Վանքի դրադարանում
զտնում են երկու օրինակ, իսկ մի քանի
այլ օրինակ՝ նոր՝ զանազան անհամար մօտ,
Անհատների մօտ զտնում մի օրինակը
(Անձգիբարան գիւղում, Փերիս) ունի գու-
նաւոր նկարներ, որոնք յետոյ ներկուել են
մի վարկեալ նկարչի կողմից:

Ոսկանի տպագրական ճիգերի եւ Աստ-
ւածաշունչի տպագրութեան մասին մինչ
այժմ գոյութիւն ունեցած միակ վէպը լուս
է տեսել 1962 թուին Երեւանում, «Ռուկան
Երեւանցի» խորագրով: Վէպի Հեղինակը
բանաստեղծ-վիպագիր Յովշաննէս Ղու-
կասեանն է, որ ծնուել է Ասրդպատականում
եւ 1946 թուի Երեդաղթին մեկնել Հայա-
տան:

«Ոսկան Երեւանցի» վէպն ունի միջին
ծավալ եւ 666 էջ: Գրում շատ վարպետորէն
նկարագրուած են այն գժուարութիւններն
ու հալածանքները, որ կրեց Ասկան Վարդա-
պետը իր տպագրական դործի մէջ: Այսուղ
շատ գեղեցիկ ձեռակ պատկերացուած է Ոս-
կանի կամքն ու շյուահասուուղ ոգին:

Ոսկանը Աստուածաշունչի տպագրու-
թիւնից բացի, որի 300-ամեակը լրանում է
այս տարի, իր ձեռքով տպագրութեան է
յանձնել Ամստերդամում շուրջ 15, իսկ
Մարսէյլում եւ Լիվոնոյում՝ 10 գիրք: Իր
նախորդների ու յաջորդների հետ միասին՝
Ամստերդամում, Լիվոնոյում եւ Մարսէյլ

լում հրատարակել են չուրջ 60 անուն զիբք(11)։

Այս զրքերի մէջ որպէս ազգային պատմութեան զիբք, խոչըր արժէք է ներկայացնում Առաքել Վարդ. Դարքիթեյու Հայոց Պատմութիւնը, որ տպագրուել է պատմագրի կենդանութեան ժամանակի 1669 թուին(12), բայց այսուհեանդեք Աստուածաշունչին իր ստուար ծաւալով ու տեխնիկայով մնում է որպէս մի փառաւոր ու պատուարեր գործ, անդամ յաջս օտարենքի(13)։

Ոսկանը իր տպագրած Աստուածաշունչից մէկ օրինակ նույն է ուղարկում Թրանսայի Լուի ֆ�. թագաւորին։ Լսելով որ թագաւորը հաւանակ է իր գործը, անձամբ դիմում է այնուղ եւ Թրանսայում տպարան հիմնելու արտօնութիւն ստանում։ Բայց նեղացած իր ըլջապատի ու որոշ գործակիցների սադրանքներից, տպարանը Թրանսայի արքային, գաւանական որոշ պատճառներ նկատի ունենալով, անցում է Լիբունո, իսկ այսուղից էլ 1672 թուին փոխադրում Մարուէլլ եւ կրկին տպագրութեան յանձնում մի քանի զրքեր ։ Նիմիական ծանր վիճակը եւ նոր տպարանի ընկե-

րակիցների ունեցած վատ վերաբերմունքն ու գաւանականական ստոր արարքները, ինչպէս եւ երկրի իշխանութեան ու հոգեւոր գասի անզիջող ու նենգամիտ սադրանքները այնքան նոր են աղջում այդ երկաթեայ կամքի տէր հոգեւորականի վրայ, որ 1674 թուին ինկնում է մահին եւ վախճանուում կարճ ժամանակից յետոյ, պանծալի անուն թողնելով իր համար։

Ոսկանի մահով թէեւ նրա հարազատ ու անդաւաճան դործակիցները մնում են զուրկ իրենց հովանաւորողից, բայց այսուհեանդեք զեռ երկար տարիներ գերադոյն ճիգերով շարունակում են տպագրական աշխատանքը, միշտ երախտադիտորէն իրենց դրքերի վրայ յիշելով մեծ ուսուցչի սիրելի անունը։

Ոսկանի մահուան առթիւ տեղին է որ մենք եւս այսուեղ կրկնենք Լէոյի խօսքը։

Ենթէ անպատճառ Հարկաւոր է որ իւրաքանչիւր նոր գործ ունենայ իր զոհերը, մենք Ոսկան Վարդապատին կարող ենք համարել ամենանիշուոր զոհը որ ստանում էր տպագրական գործը Հայերից։

Թող յակտ անմեռ մեայ մեծ մարդու մեծ գործը, աւելացնենք մենք։

Հ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նոր-Ձուդա,
30 Դեկտ. 1965

(11) Ոսկանի եւ իր գարժակիցների տպագրած գրքերի մօտաւոր ցանկը հասկել ենք բառ ՀՀունիք գրքի մասնագիտական ցուցակ-ի (1512-1800 թ.)։

(12) Դաւիթինիցին մեանլ է 1870 թուին եւ քաղ-ւի Ս. էշմիածնի միքանական զերեզմանաւութը։ Տաղանակարը հետևեալ արձանագրութիւնն աւմբ. «Պատմագրին այս է տապան Առայժմ՝ Վարդապետին Ռժձիթ բվիմ»։ Ցայտուի չէ քէ նա իր գիրքը նես-սեալ է տպագրուած քէ ոչ։

(13) Երբ 1963 թուի Հակոբմերին Հայամշայի

րագուի ժամանակ այցելեց Ամենափրկչեամ Վաթ-քը ու քանզարանը, յասուկ այդ օրւայ համար ցուցադրութեան եր դրաւել Ամսութքամում տպագրուած Աստուածաշունչը։ Երբ այդ մասին իրեն բացատրութիւն տրաւց որ 300 տարի առաջ Ամսութքամում տպագրուել է հայերէն տաշին Աստուածա-շունչը, ուրախացաւ եւ ժպիսավ տաց։ «Յառ ուրախ եմ»։